Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի դպրոցական փուլի – 2024-2025
12-րդ դասարան
Տևողությունը 90 րոպե

1. Ո՞ր շարքում է բաց թողնված միևնույն տառը:
1. քամել-ոն, գիլ-ոտին, մեդալ-ոն, ակորդ-ոն
2. գ-վել, շաղ-ամ, սար-ավորում, ձա-ար
3. երկ-նչել, ընկ-րկել, վեր-նձյուղվել, ակ-նկոր
4. գր-նակել, զար-ուղի, փ-ախտ, նշ-ար

2. Ո՞ր շարքում է բաց թողնված միևնույն տառը:
1. փղ-ուկ, որ-աքար, վեհապան-, խուր-
2. մա-կալ, հաղար-, ճռ-ք, պ-րանք
3. բա-բիռ, հա-բակ, բա-բ, ա- բարիշտ
4. նշխա-, խոտ-արք, ապաշխար-ել, հոտ-ոտել

3. Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում անջատ:
1. յոթ(հարկանի), լույս(ընծայել), օբեր(լեյտենանտ)
2. դեմ(դիմաց), մի(երկու), վառ(կանաչ)
3. առ(ձեռն), հաստ(աղի), կանաչ(կարմիր)
4. խելք(խելքի)տալ, քարե(դարյան), քիթ(քթի)

4. Ո՞ր շարքի հատուկ անունների միայն առաջինբաղադրիչներն են գրվում մեծատառով:
1. ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱ, ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՎԿԻԱՆՈՍ, ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ
2. ՎԱՆ ԳՈԳ, ՁԱԽՈՐԴ ՓԱՆՈՍ, ԳՐԻՄ ԵՂԲԱՅՐՆԵՐ
3. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԱՐԱՆԻՉ, ՀՈՒԼՅԱՆ ՏՈՄԱՐ, ՎԱՀԱԳՆ ՎԻՇԱՊԱՔԱՂ
4. ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ, ՄԱՅՐ ԵՓՐԱՏ, ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

5. Ո՞ր շարքում են այն բառերը, որոնցում երկու հնչյունափոխություն կա:
1. ակնաբուժարան, միջնորդ, մտացածին
2. հանրագիտակ, հատկանշական, թանձրամիտ
3. գարեջրատուն, գործնեություն, քաղցրահնչուն
4. հովվերգություն, ուսուցչուհի, անդադրում

6. Նշի՛ր այն շարքը, որի բոլոր բառերի արմատներին կարող է միանալ –ան վերջածանցը(առանց երկրորդ ածանցի):
1. հուզախռով, գերություն, փչակ
2. հայրանուն, մենապար, լուսնահաչ
3. ոլորապտույտ, պատվիրատու, մեղմօրոր
4. չարագույժ, գարուն, իշխել

7. Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդ.

1. մատնոցատուփ, տրամագիծ, անասուն, փողկապ
2. ստորադաս, գլխահակ, վերադարձ, դերբայ
3. վերնագիր որոտընդոստ, անդրաշխարհ, բրգաձև
4. կենսաթրթիռ, առնետորս, խորազնին, լիառատ

8.Ո՞ր շարքի բառերի իմաստներն են ճիշտ բացատրված:

1. աղորիք- հացահատիկ աղալու սարք, մեղանչել-մեղք գործել
2.երկնուղեշ- դեպի երկինք ձգվող ճյուղերով, խայտաճամուկ- ճարպիկ
3. դիպակ-մետաքսյա ոսկեթել կտոր, հոտաղ- հողի աշխատավոր
4. նյութել- թաքուն որևէ բան հրահրել, ճրագալույց- ճրագները հանգցնելը

9. Ո՞ր շարքում դարձվածքի բացատրության սխալ կա:

1. սիրտը փորն ընկնել-սաստիկ վախենալ, պոչը քաշել- մի կողմ քաշվել
2. փող հնչեցնել- ուրախ նվագել, սպիտակ ջարդ- ուծացում, բռնաճնշում
3. սիզիֆյան աշխատանք- ապարդյուն աշխատանք, անդուռ բերան- ոչ գաղտնապահ
4. ցամաք ձորի աղվես- շատ նիհար, գլխին կապել-մեկին մի բան պարտադրել

10.Ո՞ր շարքում են բոլոր այն գոյականները, որոնց հոգնակին կազմվում է –ներ վերջավորությամբ:

1. լիազոր, սկյուռ, տոնածառ, ստուգայց
2. լուսանցք, կարմրախայտ, հանքահոր, վագր
3. տեսակետ, սեպագիր, նստացույց, սպա
4. սպի, վաչկատուն, բաղաձայն, խմբագիր

11. Ո՞ր բարդ ստորադասական նախադասությունն է ճիշտ փոխակերպված պարզի:

1. Այն, որ Եվրոպան հայոց ողբերգության հանդեպ անտարբեր կեցվածք ընդունեց, հավիտենական ամոթի խարան է նույն այդ Եվրոպայի ճակատին:
   Եվրոպայի՝ հայոց ողբերգության հանդեպ անտարբեր կեցվածք ընդունելը հավիտենական ամոթի խարան է նույն այդ Եվրոպայի ճակատին:
2. Բարեկամներին, երբ ասում ենք ճշմարտությունը, հաճախ ցավ ենք պատճառում:
   Բարեկամներին ճշմարտությունը ասելու դեպքում ցավ ենք պատճառում:
3. Ոչ ոք չի ստուգել, թե որ պահից են սկսում ստել մանուկները:
   Ոչ ոք չի ստուգել մանուկների՝ ստել սկսելու պահը:
4. Նրանք, ովքեր բարձր դիրք են գրավում, ավելի հաճախ են մոլորեցնում մարդկանց:
   Նրանք՝ բարձր դիրք գրավածները, ավելի հաճախ են մոլորեցնում մարդկանց:

12. Ո՞ր նախադասությունն է անենթակա:

1. Ահա և մեր քաղաքի ծայրամասերից մեկի լքված թաղը:
2. Աշնան վերջին օրերին շուտ է մթնում:
3. Խորհրդավոր մի լռություն կա այդ ձորում:
4. Լավ ընկերը նա է, ով կողքիդ է դժվար պահերիդ:

13.Ո՞ր շարքում կա գիտական ոճին ոչ բնորոշ հատկանիշ:

1. հասկացություն, կանոն, սահմանական եղանակի ներկա ժամանակի բայաձևեր
2. խոսքի ճշգրտություն, բարդ նախադասություններ, դատողություն, սահմանում
3. մտքի պատճառահետևանքային կապ, հուզաարտահայտչական երանգավորում
4. մտահանգում, տրամաբանական մտածողություն, բանաձև

14. Ո՞ր նախադասության մեջ կետադրական երեք սխալ կա:

1. Զգում էր՝ շուտով կորցնելու է գիտակցությունը և ճիգ թափելով՝ հազիվ մնում էր ոտքի վրա:
2. Գագիկ արքայի հիմնած ձախլիկ նետաձիգների վաշտը (Գրիգոր Մագիստրոսն էր արքային տվել այդ գաղափարը), եզակի էր իր տեսակի մեջ. նրանցից ոչ մեկը, ինչպես պարզվեց՝ չէր վրիպում:
3.Մի քանի գործեր՝ արդեն տպագրված չդրեց ժողովածուի մեջ. մտածեց թույլ են, և շեղվում են ընդհանուր տրամադրությունից:
4.Մի փոքր էլ ուշանար, ամեն ինչ անդառնալի ոչնչանալու էր հրդեհի՝ մոլեգնած ու կատաղի բոցերից, որ, ագահաբար կուլ տալով՝ մոխրացնում էին արվեստի գործոցները:

15. Ո՞ր պնդումն է ճիշտ:

1.Նախադասության մեջ գոյականը նույն հոլովաձևով կարող է կատարել տարբեր պաշտոններ:
2. Ի տարբերություն հարցական դերանունների՝ հարաբերական դերանունները նախադասության անդամ չեն դառնում:
3. Ձևաբայերը օժանդակ բայերի հետ կազմում են բաղադրյալ ստորոգյալներ:
4. Որակական բոլոր ածականները ունեն համեմատության աստիճաններ:

16. Ստորադաս նախադասություններից քանիսի բնույթն է սխալ նշված:
Սերը միայն նա է հասկանում, ով դա զգացել է: (ստորոգելի)
Ինձ միշտ թվում է, թե երբեք չեմ հասնելու իմ երազանքին: (ուղիղ խնդիր)
Նրանց անունները, ովքեր պայքարել էին հայրենիքի ազատության համար, ակնածանքով ու հպարտությամբ ենք արտասանում: (բացահայտիչ)
Տարիներ հետո, երբ արտերկրում հանդիպեցինք, վերհիշեցինք մեր ուսանողական տարիները: (ժամանակի պարագա)
Դու, որ եկել ես աշխարհը փոխելու, նախ և առաջ փոխիր ինքդ քեզ: (որոշիչ)
Ես խորապես հավատում էի, որ մեր անկեղծ զրույցը կօգնի նրան: (հանգման խնդիր)

17.Տրված բայերից քանի՞սն են ներգործական սեռի:
Ուզենալ, ննջել, քայլել, թողնել, սանրվել, գտնել, սիրահարվել, հարգել, վազել, մոտեցնել, փախցնել, զբաղվել:

18.Ուղիղ խնդիր երկրորդականով քանի՞ նախադասություն կա:
Հիշի՛ր, որ մարդը լավ արարքը երբեք չի մոռանում:
Նրան մեծ վիշտ պատճառեց այն, որ այդ ծանր օրերին մենք հեռացանք:
Հաճելի է, երբ խոսակիցդ համբերատար լսելու ունակություն ունի:
Տարօրինակն այն էր, որ նա փոխել էր գյուղ մեկնելու մտադրությունը:
Կարծես երեկ էր, որ մենք հանդիպեցինք:

19. Նախադասություններից քանիսո՞ւմ համաձայնության և խնդրառության սխալներ կան:
Ճակատագրի բերումով նա իր թոռան հետ հայտնվել էին այդ գյուղում:
Արմենին՝ որպես լավագույն մարզիկ, պարգևատրեցին:
Վարպետը մի քանի նյութեր ընտրեց, որով հնարավոր կլինի վերանորոգել կոտրված կահույքը:
Ժողովի բացման նիստում ներկա էր նաև արտերկրից ժամանած պաշոնյան:
Մեր շնիկն ամեն ինչ ընկալում էր՝ բացառությամբ տնից դուրս չգալու հրահանգներին:
Ի հակադրություն Արևելքի՝ Արևմուտքն այս օրերին բացարձակապես լռում է:

20. Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության մեջ քանի՞ սխալ կա:
Նա համոզված էր, որ ձիու թամբին կպած պայուսակներում հենց այն գանձերն են, որ վաղուց մնացել են քարի տակ:

համոզված էր-պարզ ստորոգյալ, որ- ուղիղ խնդիր, ձիու-հատկացուցիչ,
թամբին-ուղիղ խնդիր, կպած- ձևի պարագա, հենց- որոշիչ,
գանձերն են- բաղադրյալ ստորոգյալ, վաղուց -ժամանակի պարագա,
մնացել են- բաղադրյալ ստորոգյալ